

Մամլոյ Հաղորդագրութիւն

Ահռելի կոտորածը Բաքքայի մէջ կը բացայայտէ ինչ որ կը ձեւացնէ վարչակարգը, թէ կը պայքարի ահաբեկչութեան դէմ

Համանման տարբեր աղբիւրներ հաստատեցին թէ ահռելի կոտորածը, որ տեղի ունեցաւ քաղաքացիներուն դէմ Բաքքայի մէջ 26/11/2014-ին, և որուն զոհ գնաց աւելի քան հարիւր նահատակ, պատճառն էր վարչակարգի ուժերու օղանաւները, որոնք իրագործեցին աւելի քան տասը յաջորդական օդային յարձակումներ քաղաքին վրայ: Այս յարձակումներուն արդիւնքն էր կործանել մզկիթ մը աղօթողներուն վրայ: Եւ արդէն փաստագրուեցաւ անոնցմէ, աւելի քան յիսուն նահատակներու անուններ:

Ազգային համակարգող Մարմինը կը յայտնէ իր խիստ դատապարտումը ահաբեկչական գործողութիւններուն, որոնք ուղղուած են անմեղ քաղաքացիներուն դէմ, և ան կրկին կը հաստատէ թէ այսպիսի ոճրագործութիւններ կը բացայայտէ ինչ որ կը ձեւացնէ վարչակարգը թէ կը պատերազմի ահաբեկչութեան դէմ, և իրականութեան մէջ ան կ'օգնէ անոր զարգացումին և տարածումին, փոխանակ պայքարելու անոր դէմ, և ցաւօք այս է, որ կը պատահի այսօր Բաքքայի և անոր շրջակայքին մէջ, ինչպէս որ պատահեցաւ Սուրիոյ այլ շրջաններու մէջ: Եւ այս առումով, Ազգային Համակարգող Մարմինը կը բեռնէ միջազգային հանրութիւնը, և յատկապէս ազդեցիկ և ներգործող պետութիւնները Սուրիոյ մէջ, քաղաքական և բարոյական պատասխանատուութիւնը Սուրիական ողբերգութիւնը շարունակութեան համար, որովհետեւ լուրջ չէ մղելու քաղաքական լուծումը, Ժընեւի յայտարարութիւնը իրագործելու միջոցով:

Ողորմութիւն նահատակներուն և բարի ապաքինում վիրաւորներուն

Դամասկոս, 28/11/2014 - Ազգային Համակարգող Մարմնի Տեղեկատուութեան Գրասենեակ